

Չմորենին անկէզ վառեալ
 Չծընունդ քո նշանակեալ:

65 Հուրն Աստուած ի քեզ իջեալ,
 Եւ դու անկէզ մընացեալ,
 Ի ծոցոյդ մեզ լոյս ծագեալ,
 Չաշխարհքս լուսաւորեալ:

70 Ձայն որ յերկնից վըկայեաց,
 Ի Յորդանան քարողեաց,
 Չքո միածինն դաւանեաց
 «Դա՛ է որդի իմ Աստուած»:

Ղամբարափայլ ջահըդ վառ
 Աթոռ հրեղէն բարձրք կառ,
 Աստուածածինըդ պայծառ,
 Մեզ լըսեցո՞ւ քոյդ բարբառ:

75 Ճեմես ի վերինդ խորան
 Աստուածութեան տեսարան,
 Լուսափայլ քոյդ տեսութեան
 Ըզմեզ արասցես արժան:

80 Մարգարէիցըն հանդէս
 Գուշակ զանազանապէս,
 Եւ խօսեցան միապէս
 Ըզծընունդ քո յայտնապէս:

85 Յառաջըն անդ ի դրախտին,
 Ուր խաբեցաւ մեր նախնին,
 Տէրըն խոստացաւ նոցին,
 Թէ Աստուածանման լինին:

67. A. Թարօր, Յորդանան, գոչեաց: — 70. B.
 իմ որդի:

70. հոս էլ որդիք Ելն Կէլ: